ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՐՄԻՆԵ ԱՐԱՐԱՏԻ

ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՆՏԻԿ ԽԵՑԵՂԵՆԸ (ՏԵԽՆԻԿԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ-ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՐԴԱՐԱՆՔԸ)

**Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2020

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ պ.գ.թ. ***Ի. Ա. Կարապետյան***

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ. ***Հ. Գ. Ավետիսյան***
պ.գ.թ. ***Գ. Գ. Քոչարյան***

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի պատմության թանգարան

Պաշտպանությունը կայանալու է 2020 թ. մարտի 26-ին, ժամը 14:00-ին, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Հնագիտության և ազգագրության 007 մասնագիտական խորհրդում (հասցե՝ Երևան-0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թ. փետրվարի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պատմական գիտ. թեկնածու ***Ա. Է. Հարությունյան***

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Պատմական Հայաստանի հյուսիսարևելյան երկու խոշոր նահանգների՝ Արցախի և Ուտիքի պատմամշակութային և էթնիկ կերպարի վերականգնումը արդի հայագիտության կարևոր խնդիրներից մեկն է, որը ներկա աշխարհաքաղաքական գործընթացների պայմաններում, մշակութայինից զատ, ձեռք է բերում նաև քաղաքական բովանդակություն: Այս առումով Արցախի Տիգրանակերտի պատմահնագիտական հետազոտությունը առաջնային նշանակություն է ստանում: Տիգրանակերտի պեղումները երևան են բերել ուշ հելլենիստական և ուշ անտիկ շրջանի հնագիտական նոր համալիրներ, որոնց շարքում ուրույն տեղ է զբաղեցնում անտիկ խեցեղենը, որը մոտ մեկ ու կես տասնամյակ ընթացող պեղումների ամենաառատ հնագիտական նյութն է: Այդ խեցեղենի բազմակողմանի քննությունը հնարավորություն է ընձեռում վերականգնել ինչպես խեցեգործության ընդհանուր բնութագիրը, այնպես էլ նրա տեղը Կուրի աջափնյակի առանձնակի մշակութային համատեքստում:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության գլխավոր նպատակն է տեխնիկատեխնոլոգիական, տիպաբանական և զարդամոտիվների հորինվածքային քննությամբ վերականգնել Արցախի Տիգրանակերտի ուշ հելլենիստական և ուշ անտիկ խեցեղենի ամբողջական բնութագիրը՝ սկսած հումքի ընտրությունից և նրա նախապատրաստումից մինչև ձևակազմության գործընթացը, կիրառությունը, գեղարվեստական հորինվածքների կառուցվածքն ու իմաստաբանությունը, ինչպես նաև նրա տարածաշրջանային առանձին դրսևորումները:

Դրված նպատակն էլ պայմանավորել է հետևյալ խնդիրների մանրամասն քննությունն ու ներկայացումը.

1. Արցախի և Ուտիքի ուշ հելլենիստական և ուշ անտիկ ժամանակաշրջանի խեցեղենի հայտնի հավաքածուների նկարագրական շտեմարանի ստեղծում,
2. տեխնոլոգիական խնդիրների պարզաբանում,
3. խեցեղենի ձևակազմական հատկանիշների տիպաբանական վերլուծություն և գործառութային նշանակության ուսումնասիրություն,
4. գունազարդ խեցեղենի ձևերի և զարդամոտիվների միջև փոխառնչությունների դիտարկում, զարդամոտիվների և հորինվածքների դեկորատիվ և իմաստաբանական քննություն,
5. Արցախի Տիգրանակերտի և այլ տարածաշրջանների համաժամանակյա խեցեղենի նմանատիպ արտեֆակտերի հետ ունեցած փոխազդեցությունների, ի մասնավորի Կովկասյան Աղվանքի, Իբերիայի և այսպես կոչված ֆեսթունյան (Festoon), թրիանգլ (Triangle) և արդաբիլյան (Ardabil) ոճերի գունազարդ խեցեղենի հետ փոխառնչությունների և ազդեցությունների քննարկում և վերլուծություն, Կուր գետի երկու ափերի բնակչության էթնիկության որոշ հարցերի արծարծում,

6. խեցեղենի քննության ընձեռած հնարավորություններով Տիգրանակերտի տնտեսության ճյուղերին, Տիգրանակերտի մշակութային ազդեցությանը վերաբերող մի շարք խնդիրների վերհանում:

Աշխատանքի գիտական նորույթը և գործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ ներկայացվում և առաջին անգամ շրջանառության մեջ է դրվում Տիգրան Մեծի կառուցած Արցախի Տիգրանակերտի և նրա շրջակայքի պեղումների արդյունքում հայտնաբերված ուշ հելլենիստական և ուշ անտիկ ժամանակաշրջանի խեցեղենը, որը թույլ է տալիս քննել քաղաքի և տարածաշրջանի տնտեսության, կենցաղի, պաշտամունքի հետ կապված որոշ խնդիրներ:

Ներկա հետազոտությամբ առաջին անգամ փորձ է արվել համալիր ուսումնասիրության ենթարկել և դասակարգել Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեղենը, քննել և ուրվագծել Տիգրանակերտի, Արցախի և Ուտիքի՝ այլ տարածաշրջանների և երկրների հետ ունեցած փոխազդեցությունները:

Ատենախոսությունում առաջարկված Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեղեն համալիրի գործառութային-ձևակազմական դասակարգման մոդելը, ինչպես նաև գունազարդ խեցեղենի զարդապատկերների ու զարդամոտիվների աղյուսակը գործնական և մեթոդաբանական նշանակություն կարող են ունենալ անտիկ խեցեղենի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների համար:

Ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքը: Հետազոտման նյութը Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեղենն է, որի ուսումնասիրության և վերլուծության համար աղբյուրագիտական հենք են ծառայել նախ Արցախի Տիգրանակերտի և շրջակա հուշարձանների (Մարտակերտ, Հաթերք, Ճանկաթաղ, Առաջաձոր), հարակից տարածքների (Գալա-Թեփե, Մինգեչաուր, Կապաղակ, Գարաքոբար, Օղլանկալա (Նախիջևան) պեղումների միջոցով ձեռք բերված խեցեղեն նյութը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության անտիկ հնավայրերի (Արմավիր, Արտաշատ, Գառնի, Դվին, Շիրակավան, Երվանդաշատ, Բենիամին, Հացավան, Շամիրամ, Օշական և այլն), Վրաստանի (Իբերիայի անտիկ քաղաքներ՝ Սամադլո, Մցխեթա, Ուպլիսցիխե, Դեդոպլիս Գորա, Թախտիձիրե և այլն), հյուսիսմերձսևծովյան ուշ հելլենիստական կենտրոնների՝ Խերսոնես, Օլվիա, Արևելամիջերկրածովյան կենտրոնների՝ Հռոդոս, Սարդիս, Հյուսիսային Միջագետքի՝ Նիմրուդ, Վանա լճի ավազանի, իրանական (Ուրմիա լճի ավազան, Հասանլու, Զիվիե, Արդեբիլ, Յանիկ Թեփե) և միջինասիական պարթևական (Ժիգա Թեփե, Նիսա, Հին Մերվ, Թոփրակ-Կալա) համաժամանակյա և ավելի վաղ հուշարձանների նյութերը:

Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեղենի համար սկզբնաղբյուրի նշանակություն են ունեցել նաև վերջին տարիներին հանրապետական և միջազգային տարբեր պարբերականներում Արցախի Տիգրանակերտի արշավախմբի հրապարակումները և հնագիտական աշխատանքների տարեկան հաշվետվությունները (ձեռագիր):

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության մեջ կիրառել ենք խեցեղենի պատրաստման տեխնիկատեխնոլոգիական, գործառութային-ձևաբանական, գեղարվեստական հարդարանքի տեխնիկական հնարների և

հորինվածքային դասակարգման և նկարագրության մեթոդները և այդ քննության հիման վրա ձեռք բերված արդյունքների պատմահամեմատական վերլուծության մեթոդը: Հետազոտությունն իրականացվել է Հայկական լեռնաշխարհի և Մերձավոր Արևելքի այլ տարածաշրջանների անտիկ ժամանակաշրջանի խեցեղեն նյութերի համակարգային հետազոտման մեթոդով, որը ենթադրում է տեղական և ներմուծված արտադրանքի զատորոշում, տեխնիկաների և ոճերի ծագման հնարավոր կենտրոնների հստակեցում, խեցեղենի՝ տնտեսամշակութային ավելի ընդարձակ համատեքստի վերականգնում:

Ատենախոսության փորձաքննությունը և հրապարակումները: Աշխատանքը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին Հայաստանի հնագիտության բաժնում՝ արժանանալով դրական կարծիքի: Քննարկվող հիմնական դրույթները զեկուցումներով ներկայացվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Ատենախոսության որոշ հիմնադրույթներ հրատարակվել են վեց գիտական հոդվածներում, որոնց ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

Աշխատանքի կառուցվածքը և բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է 185 էջ ընդգրկող տեքստային մասից՝ ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից,օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից, հապավումների, քարտեզների և աղյուսակների ցանկերից, 4 քարտեզներից և 64 աղյուսակներից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ արծարծված են կարևոր հիմնախնդիրները: Խեցեգործական արտադրանքը հին հասարակությունների և քաղաքակրթությունների պատմամշակութային ամենատարածված և ամենացայտուն ընդհանրություններից մեկն է: Ունենալով ձևակազմական, տեխնոլոգիական և գաղափարական բնույթի առանձնահատկություններ՝ այն կարող է արգասավոր նյութ լինել առանձին համայնքների կենսագործունեության տարբեր ոլորտների ուսումնասիրման համար: Տեսակավորելով, դասակարգելով և ներդնելով որոշակի սխեմայի մեջ՝ խեցու բեկորները կարող են անփոխարինելի աղբյուր դառնալ ոչ միայն տեխնոլոգիական, այլև պատմական բնույթի տեղեկատվության համար:

Այդ շարքում ուրույն է Արցախի Տիգրանակերտի խեցեգործությունը:

Արցախի Տիգրանակերտի հնագիտական արշավախումբն իր գործունեության տասնչորս տարիների ընթացքում վեր է հանել քաղաքի հիմնադրման պատմաքաղաքական, տնտեսամշակութային և քաղաքաշինական համատեքստը, տեղադրության, հատակագծման ու կառուցապատման հարցերը, քաղաքի անտիկ, վաղ և զարգացած միջնադարյան փուլերի համառոտ պատմական, ռազմապաշտպանական ու տնտեսամշակութային բնութագիրն ու որոշակի պատմամշակութային իրողությունները:

Հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները, գտածոների տեխնիկական մշակման ներկա մակարդակը, առանձին հարցերի վերաբերյալ արդեն իրականացված և հրատարակված հետազոտությունները, կուտակված հետազոտական փորձը բավարար հիմք են տալիս առավել հանգամանալից և խորությամբ քննարկել հայտնաբերված հնագիտական նյութերը և մասնավորապես մեծաքանակ խեցեգործական արտադրանքը:

Այդ արտադրանքի մեջ հատկապես առանձնանում է անտիկ խեցեղենը, որի տիպաբանական և իմաստաբանական քննությունը թույլ է տալիս վեր հանել ոչ միայն Տիգրանակերտի, այլև Արցախ-Ուտիքի խեցեգործության պատկերն անտիկ դարաշրջանում, տեսնել նրա կապերը Հայաստանի այլ հնավայրերի և հարևան երկրների խեցեգործական արտադրանքի հետ, ներկայացնել դրա գրաված տեղը և դերը հայկական և տարածաշրջանային խեցեգործության զարգացման պատմության մեջ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՆՏԻԿ ԽԵՑԵՂԵՆԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՆԱՐՆԵՐԸ

Ատենախոսության այս բաժնում քննվել է բրուտագործական արտադրանքի ողջ գործընթացը՝ սկսած հումքի ընտրությունից մինչև անոթների մակերեսի տեխնիկական մշակումն ու թրծումը: Փորձ է արվել ներկայացնել Տիգրանակերտի խեցեգործության ընդհանուր պատկերը՝ նյութի հնագիտական քննությունը համալրելով նաև համապատասխան ազգագրական տվյալներով և ժամանակակից բրուտվարպետների կողմից կիրառվող ավանդական հնարների և թրծման գործընթացի վերաբերյալ հեղինակի հավաքած նյութերով: Քննության արդյունքում եզրակացվել է, որ Արցախի Տիգրանակերտի խեցեղենի հիմնական մասը պատրաստված է ավազախառն մանրահատ բարձրորակ կավից: Անոթները հիմնականում պատրաստված են դուրգի վրա: Ըստ անոթների ներքնապատերի հետքերի դիտարկման տարբերակել ենք դանդաղ և արագ պտտվող դուրգի կիրառությունը: Խեցեղեն արտադրանքի մեջ որոշակի թիվ են կազմում և ձեռածեփ անոթները, որոնց առանձնացումը հիմնվում է անոթների ասիմետրիկության, ներքին մակերեսի վրա համակենտրոն գծերի բացակայության վրա: Ելնելով նրանից, որ հաճախ դրանք վատ են թրծված՝ կարելի է ենթադրել այդ անոթների պատրաստման տնայնագործական բնույթը: Որոշ անոթներ էլ պատրաստված են կաղապարի օգտագործմամբ:

Խեցանոթների ձևակազմավորման գործընթացի բաղկացուցիչ մասն էին կազմում նաև զանազան գործառութային և դեկորատիվ հավելումները, ինչպիսիք են բռնակները, ծորակները և այլն, որոնք պատրաստվում էին առանձին, հետո ամրացվում էին անոթի իրանին:

Խեցեղեն իրերը պատրաստելուց հետո իրականացվում էր խեցեգործության մեջ ամենապատասխանատու փուլերից մեկը՝ արտադրանքի չորացումը, որի ճիշտ կազմակերպելու արդյունքում հնարավոր էր լինում կանխել թրծման ըն-

թացքում խոտանի առաջացումը, քանի որ թրծման ժամանակ կավախմորի մեջ պահպանված ջրի անհավասարաչափ գոլորշիանալու պատճառով կավանոթները կարող էին ճաքել:

Տիգրանակերտի անտիկ խեցեղենի սպասքի անոթների թրծումը բարձորակ է: Սակայն երբեմն թրծումն իրականացվել է կարճ ժամանակահատվածում, շատ արագ և բարձր ջերմաստիճանի տակ, որի հետևանքով խեցատների կտրվածքում երևում է թուխ միջնաշերտ: Դրանք հիմնականում արձանագրվում են տնտեսական ու խոհանոցային տեսականիների պարագայում:

Անոթների արտաքին, իսկ բաց անոթների ներքին մակերեսը ծածկված է բաց վարդագույն, կարմրաշագանակագույն, դեղնականաչավուն շփոթով, ավելի հազվադեպ՝ անգոբով և մանրակրկիտ փայլեցրած է, որը նույնիսկ օգնում է խեցեղենի ընդհանուր թվագրմանը:

Ատենախոսությունում Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցու վիզուալ քննությամբ առանձնացվել է **երեք տեխնիկական խումբ**, որոնք պայմանականորեն անվանել ենք **I. կարմրավարդագույն, II. դեղնականաչավուն, III. սև ու մոխրագույն,** որի հիմքում ընկած են այնպիսի չափորոշիչներ, ինչպիսիք են խեցու գույնը, կտրվածքի բնութագիրը և մակերեսի մշակման ձևը (շփոթապատ-անգոբապատ, գունազարդված, փայլեցրած): Ըստ վերջին տարիների հնագիտական հետազոտության արդյունքների վիճակագրական տվյալների, կարմրավարդագույն խեցատները կազմում են ամբողջ խեցեղենի 75 %-ը, դեղնականաչավունը՝ 16 %-ը, իսկ սևը և մոխրագույնը՝ 9 %-ը: **Առաջին խմբի** խեցատների մակերեսը, որպես կանոն, շփոթապատ է կամ անգոբապատ, լավ կոկած և փայլեցրած: Այս խումբն ընդգրկում է ձևակազմական տարաբնույթ անոթներ և ամենաշատն է գունազարդված: Ընդ որում՝ գունազարդ խեցեղենը չի տարբերվում անզարդ խեցեղենից ո՛չ կավի որակով և գույնով, ո՛չ էլ ձևերով: **Երկրորդ խմբի** խեցատներն ունեն բաց դեղնավուն և դեղնականաչավուն երանգներ, պատրաստված են համասեռ, լավ հունցած կավերից, ունեն հավասարաչափ թրծում: Որպես կանոն, դրանք կտրվածքում չունեն մոխրագույն միջնաշերտ, սակայն խեցու մակերեսին և կտրվածքում անզեն աչքով երևում են սև խայտեր: Արտաքին մշակմամբ զիջում են տեխնիկական առաջին խմբի խեցատներին. ունեն թույլ փայլեցված կամ առանց փայլեցման մակերես և հազվադեպ են լինում գունազարդված: Ինչպես Հայաստանի համաժամանակյա այլ հուշարձաններում, այնպես էլ Տիգրանակերտում, ուշ անտիկ շրջանում գունազարդ խեցեղենն աստիճանաբար փոխարինվում է բաց գույնի, անփայլ մակերեսով անոթներով, և վերոնշյալ հատկանիշներով խեցեղենը դառնում է իշխող և թվագրող: Ընդ որում՝ տեխնիկական այս խմբի խեցին ձևակազմական առումով խիստ բնորոշ է փռված պնակներին և ձկնամաններին, որը ևս ուշ անտիկ շրջանի նյութի համար թվագրող ցուցիչ է:

Տիգրանակերտի անտիկ խեցու **երրորդ** տեխնիկական խումբը ներառում է սև ու մոխրագույն հայելափայլ խեցանոթների՝ ծորակավոր սափորների, ըմպանակների, թասերի, գավաթների և այլ անոթների բեկորները: Այս անոթների խեցու որակը բարձր է, չի զիջում բաց գույնի տեսականու որակին, կտրվածքում խառ-

նուրդներ գրեթե չեն նկատվում, խեցին խիտ է, ամուր և զրնգուն: Դրանք հիմնականում հարդարված են փայլեցումով, փորագրմամբ և դրոշմազարդմամբ:

Այս քննությունից կարելի է եզրակացնել, որ Տիգրանակերտի անտիկ խեցեղենը՝ պատրաստման գործընթացով և տեխնիկական բնութագրով, բազմաթիվ զուգահեռներ ունենալով Հայաստանի անտիկ բնակավայրերից և դամբարաններից պեղված համաժամանակյա նյութի հետ, ըստ էության, ներկայացնում է մշակութային ավելի մեծ ընդհանրության մի մասը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱՆՏԻԿ ԽԵՑԵՂԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ, ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ-ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

2.1. Տիգրանակերտի անտիկ խեցեղենի ժամանակագրության խնդիրները

Արցախի Տիգրանակերտի խեցեգործական արտադրանքը հայտնաբերվում է քաղաքի պեղված բոլոր տեղամասերից: Բայց քանի որ Տիգրանակերտի միջնաբերդում և վաղքրիստոնեական հրապարակում կյանքը շարունակվել է հաջորդաբար մինչև 13-րդ դարի կեսեր, ուստի անտիկ շերտը խաթարվել է, անտիկ ու միջնադարյան նյութերը հայտնաբերվում են խառը վիճակում: Այդ տարածքներում դեռևս չի գտնվել մի հատված, որտեղ առկա լինի հնագիտական շերտերի կանոնավոր հաջորդականության ողջ դինամիկան, և այդ պատճառով չեն բացահայտվել ուշ հելլենիստական շերտի հզորությունն ու բնույթը: Սակայն փաստագրվել է մի օրինաչափություն. անտիկ նյութերը մեծ մասամբ հայտնաբերվում են հիմնաժայռին նստած շերտից, միջնաբերդի կառուցմանը ժամանակակից շինությունների և պատերի միջավայրում: Այլ իրավիճակ արձանագրվեց քաղաքի հարավային ծայրամասում առանձնացված Անտիկ առաջին թաղամասի պեղումների ժամանակ, որտեղ վավերացվեց հնագիտական շերտերի հաջորդական խիստ կանոնավոր պատկեր. վերին ճմասևահողային 0,40-0,60 մ թանձրության շերտի տակ բացվեց մշակութային երեք շերտ՝ իրենց շինարարական կառույցների և նյութական մշակույթի տվյալներով, որոնց հիման վրա համապատասխանաբար առանձնացվել են երեք մշակութային շերտեր (ՄՇ)՝

I	ՄՇ	-	ուշ հելլենիստական	(մ.թ.ա 1-ին - մ.թ. 1-ին դարեր),
II	ՄՇ	-	ուշ անտիկ	(մ.թ. 2 - 3-րդ դարեր),
III	ՄՇ	-	վաղ միջնադարյան	(մ.թ. 4 – 7-րդ դարեր):

Ատենախոսության շրջանակներում մենք անդրադարձել ենք միայն անտիկ՝ I և II մշակութային շերտերին: Այդ շերտերից հայտնաբերված խեցեղենի ձևակազմության, պատրաստման տեխնիկական չափորոշիչների և գեղարվեստական հարդարման հնարների տվյալների զուգորդմամբ տարանջատել ենք Տիգրանակերտի անտիկ խեցեղենը վաղմիջնադարյանից և դասակարգել դրանք:

Տիգրանակերտի Անտիկ քաղաքային առաջին թաղամասի I և II մշակութային շերտերից հայտնաբերված խեցեղենի դիտարկումների հիման վրա փորձ է արվել համապատասխանաբար առանձնացնել ժամանակագրական երկու խումբ՝ **ուշ հելլենիստական** (մ.թ.ա 1-ին - մ.թ. 1-ին դարեր) և **ուշ անտիկ** (մ. թ. 2-րդ – 3-րդ դարեր):

Առայժմ այդ առանձնացումները վերաբերում են սկուտեղներին, պնակներին և ձկնամաններին, ինչպես նաև բաց դեղնականաչավուն անգոբով պատված խեցեղենի այլ նմուշներին, որոնք հանդես են գալիս ուշ անտիկ ժամանակաշրջանում: Նման պատկեր տեսնում ենք ողջ Հայաստանի և Արևմուտքի համաժամանակյա նյութերում:

Թեև վերակառուցումների կամ վերափոխությունների հետքեր բացահայտվել են Անտիկ առաջին թաղամասի մի քանի հատվածներում, այդուհանդերձ վերոնշյալ երկու շերտերի խեցեղեն համալիրների միջև խիստ փոփոխություններ և ընդհատումներ չեն վավերացվել, ինչը կարող էր թույլ տալ խոսել բնակչության փոփոխության մասին: Ընդհակառակը, I և II մշակութային շերտերի շատ գյուտերը վկայում են, որ Անտիկ առաջին թաղամասում երկար ժամանակ բնակչության կազմը չի փոխվել:

Տիգրանակերտի անտիկ խեցեգործական արտադրանքի թվագրման համար կարևոր կռվան է եղել ինչպես քաղաքի հիմնադրման որոշակիությունը (մ. թ. ա. 1-ին դար), անտիկ Արևելյան դամբարանադաշտի կարասային թաղումների գտածոների ճշգրիտ թվագրումը (լավ պահպանված պարթևական Միհրդատ երրորդին (մ. թ. ա. 57-55 թթ.) և Որոդես երկրորդին (մ. թ. ա. 57-38 թթ.) պատկանող արծաթյա դրահիմներ, նույն ժամանակաշրջանին պատկանող կնիք-մատանիներ և ուլունքներ), այնպես էլ Հայաստանի Հանրապետության անտիկ այլ հուշարձանների՝ լավ ուսումնասիրված խեցեղեն աղերսների և Արցախի տարածքից պեղումներով և պատահական գյուտերով ձեռք բերված դամբարանային խեցեղեն նյութերի ընդգրկումը (Հաթերք, Ճանկաթաղ, Առաջաձոր, Կոլխոզաշեն, Կարմիր շուկա և այլն):

2.2. Անտիկ խեցեղենի դասակարգման տեսական և մեթոդաբանական խնդիրները

Տիգրանակերտի մոտ մեկ ու կես տասնամյակ ընթացող պեղումներով հայտնաբերված մեծաքանակ անտիկ նյութն իր տեսակներով ու ձևերով աչքի է ընկնում մեծ բազմազանությամբ՝ տարբեր չափերի կարասներ, կճուճներ, միականթ, երկկանթ, անկանթ, ծորակավոր սափորներ, տափաշշեր, ձձումներ, կաթսայատիպ անոթներ, պուլիկներ, տաշտեր, քրեղաններ, փիալա-ըմպանակներ, կիսագնդաձև ու կիսաձվաձև գավաթներ, սկուտեղներ, պնակներ, ձկնամաններ, ճրագներ և այլն, որի դասակարգումը խիստ առաջնային էր: Նման բազմազան խեցեղենի դասակարգումն ու նկարագրությունը երևան են բերում համապատասխան տեսական և մեթոդաբանական գիտելիքի և մոտեցումների անհրաժեշտություն: Հայաստանում անտիկ խեցեղենի ուսումնասիրության և դասակարգման առաջին փորձը կատարել է Գ. Տիրացյանն իր՝ Արմավիրի հին հայկական խեցեղենին նվիրված հոդվածում: Հայաստանի անտիկ մյուս հուշարձաններից (Գառնի, Արտաշատ, Դվին, Օշական, Ավան, Երվանդաշատ և այլն) հայտնաբերված խեցեղենը պեղող հնագետների կողմից դասակարգվել է՝ գլխավորապես կիրառելով անոթների գործառութային, ձևի և զարդարվեստի հատկանիշների վերլուծության մեթոդը: Ընդ որում՝ մի դեպքում բաժանումը կատարվել է ըստ ժամանակագրության, մեկ այլ դեպքում՝ ըստ գործածության և այլն:

Հենվելով խեցեղենի դասակարգմանն ու տիպաբանությանը նվիրված մեծաքանակ գիտական գրականության վրա՝ մեր կողմից առաջադրվել է անտիկ խեցեղեն համալիրի համար հստակ մշակված, աստիճանակարգված համակարգով գործառութային-ձևաբանական դասակարգման մոդել: Դրա հիմքում ընկած է խեցանոթների դասակարգման հիմնական ***յոթ կատեգորիաների*** առանձնացումն ըստ կիրառական-գործառութային նշանակության.

1. շինարարական,
2. մթերքի պահպանման և վերամշակման,
3. խոհանոցային,
4. սպասք,
5. առևտրաարշավային,
6. ծիսապաշտամունքային,
7. այլ:

Դրանք իրենց հերթին, ըստ ձևաբանական հատկանիշների, ստորաբաժանվում են տեսակների, տիպերի և տարբերակների:

2.3. Տիգրանակերտի անտիկ խեցեղենի գործառութային-ձևաբանական դասակարգումը

Արդյունքում մեր առաջարկած մոդելը ներկայանում է հետևյալ տեսքով.

1. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ
1.1. Աղյուսներ
1.2. Կղմինդրներ
1.3. Փողրակներ

2. ՄԹԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ
2.1. Կարասներ
2.2. Կճուճներ
2.3. Պուլիկներ
2.4. Ձձումներ

3. ԽՈՀԱՆՈՑԱՅԻՆ
3.1. Կճուճներ
3.2. Կոնք-տաշտեր
3.3. Քրեղաններ
3.4. Սաջեր

4. ՍՊԱՍՔ
4.1. Սափորներ
4.2. Կճուճներ
4.3. Կաթսայատիպ անոթներ
4.4. Թասեր
4.5. Փիալա-ըմպանակներ
4.6. Գավաթներ
4.7. Ձկնամաններ
4.8. Պնակներ
4.9. Ափսեներ
4.10. Սկուտեղներ
4.11. Սկահակներ
4.12. Կափարիչներ
4.13. Աղամաններ

5. ԱՌԵՎՏՐԱԱՐՇԱՎԱՅԻՆ
5.1. Տափաշշեր

6. ԾԻՍԱՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ
6.1. Կենդանակերպ անոթներ
6.2. Թրծակավե արձանիկներ

7. ԱՅԼ
7.1. Ճրագներ
7.2. Մանածագործական կախիկներ
7.3. Իլիկի գլխիկներ
7.4. Կոճակներ
7.5. Խաղալիք

Թեև անտիկ շրջանի խեցեգործության մեջ ուժեղ էր արտահայտված ստանդարտացումը, Տիգրանակերտի նյութի համալիր հետազոտության արդյունքում, այնուամենայնիվ, հնարավոր եղավ դուրս բերել խեցեղենի մի քանի տեղային տիպեր, ինչպիսիք են ծորակավոր և մեկ հորիզոնական բռնակով սափորները, կաթսայատիպ անոթները, դուրս հակված շուրթով, ներքուստ գունազարդ համակենտրոն գոտիներով հարդարված թասերն ու սևափայլ ողկուզակիր գավաթները:

2.4. Տիգրանակերտի ներմուծված խեցեղենը

Տիգրանակերտի անտիկ խեցեղեն նյութերի մեջ ոչ մեծ խումբ է կազմում ներմուծված խեցեղենը՝ կազմված ամֆորայի, ամֆորիսկի, ունգվենտարիումների, օլպիոս-սափորի, կանթարոսի և ջնարակապատ անոթների բեկորներից:

Նորահայտ նյութերը խիստ բեկորային են, բայց զուգադրվում են Հայաստանի և հելլենիստական աշխարհի մյուս հնագիտական շատ հուշարձանների՝ բավականաչափ ուսումնասիրված նմանատիպ տեսակների հետ, ուստի այս խմբի քննությունը, ձևերի տիպաբանական վերականգնումը և ժամանակագրական դասակարգումը կարևոր են Արցախի Տիգրանակերտի տնտեսական, առևտրական, մշակութային կապերի վերհանման, քաղաքային թաղամասերի առաջացման, գոյատևման, բնակեցման ժամանակահատվածի ճշգրտման համար:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՆՏԻԿ ԽԵՑԵՂԵՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆԵՐԸ, ԶԱՐԴԱՄՈՏԻՎՆԵՐԸ ԵՎ ՀՈՐԻՆՎԱԾՔՆԵՐԸ

Այս գլխում վերլուծության են ենթարկվել խեցեղենի դեկորատիվ հարդարանքի բոլոր հիմնական տեխնիկական հնարները: Ըստ այդմ առաջադրվել է դասակարգման հետևյալ տարբերակը՝

3.1. գունազարդում,
3.2. փորագրազարդում,
3.3. դրոշմազարդում,
3.4. ծեփում և վերադրում,
3.5. փայլեցում:

3.1. Գունազարդում

Տիգրանակերտի անտիկ խեցեղենի նշանակալի մաս կազմող գունազարդ խեցեղենի քննությունը ցույց է տալիս, որ անոթների նկարազարդումն իրականացվել է հիմնականում միագույն ներկերով, թեև հանդիպում են նաև համատեղ սև և կարմիր գույնով իրականացված օրինակներ: Օգտագործվող ներկապնակը բազմազան է և ներկայանում է օխրայի տարբեր երանգներով՝ բաց սանգինից մինչև կարմիր, բաց շագանակագույնից մինչև հագեցած մուգը և հազվադեպ սև գույնը:

Նկարազարդվել են առաջին տեխնիկական խմբի գրեթե բոլոր տեսակների անոթները՝ բացառությամբ խոհանոցային կճուճների, ձձումների, սաջերի, ճրագների

և աղամանների: Զարդամոտիվի տեղադրումն անոթի մակերեսին թելադրված է գլխավորապես անոթի ձևից: Փակ անոթների դեպքում այն զետեղված է հիմնականում վերին հատվածի՝ շուրթի, վզի, կանթերի և իրանի ամենալայն հատվածի վրա: Հազվադեպ հանդիպում են նաև հատակամերձ հատվածում զարդանկարված օրինակներ: Տափաշշերի դեպքում զարդը զբաղեցնում է անոթի ուռուցիկ կողմը: Բաց անոթների դեպքում (թասեր, ըմպանակներ, գավաթներ, պնակներ և սկուտեղներ) նկարազարդված են անոթների՝ թե՛ արտաքին, թե՛ ներքին մակերեսները: Այսպիսով՝ առկա է անմիջական կապ անոթի ձևի և զարդապատկերի միջև:

Զարդամոտիվներն ու պատկերները բազմազան են: Հետազոտողների կողմից, որպես կանոն, դրանք բաժանվել են երկրաչափական, բուսական և կենդանական խմբերի կամ դասերի: Քանի որ տիգրանակերտյան նյութում առկա են մարդկանց պատկերներ, մենք, հետևելով առաջարկված դասակարգմանը, կենդանական խմբի փոխարեն առաջարկում ենք «ֆիգուրատիվ» բառեզրը, ինչպես նաև առանձնացրել ենք մեկ խումբ ևս, որտեղ խմբավորված են այլ զարդամոտիվներ:

Այսպիսով՝ Տիգրանակերտի գունազարդ խեցեղենի զարդապատկերներն ու զարդամոտիվները դասդասել ենք հետևյալ խմբերի մեջ՝

1. երկրաչափական,
2. բուսական,
3. ֆիգուրատիվ,
4. այլ:

Կազմվել է դրանց դասակարգման աղյուսակ:

Վերոնշյալ նյութի քննությունը թույլ է տալիս դուրս բերել մի քանի օրինաչափություններ.

• Քննվող երկրաչափական գրեթե բոլոր զարդաձևերը, որպես կանոն, ներառված են անոթը զարդարող նեղ, հորիզոնական գոտիների մեջ: Ընդ որում՝ յուրաքանչյուր գոտի հարդարվում է հիմնականում մեկ մոտիվով, որի արդյունքում անոթն ունենում է տարատեսակ մոտիվներ ներառող 2-5 գոտիներից կազմված հորինվածք:

• Հոծ ներկած եռանկյունիները տեղադրվում են փակ անոթների պսակից ցած, որը հատկապես օրինաչափ է կաթսայատիպ անոթների դեպքում:

• Ներգծված եռանկյունիներին նախորդում կամ հաջորդում են շղթայաձև զարդապատկերները:

• Որպես կանոն, փակ խեցանոթների, ի մասնավորի ծորակավոր սափորների, իրանի ամենալայն հատվածը գոտևորում է հոծ ներկած կամարաշարը, որի ծայրերը երբեմն մինչև անոթի հատակամասն են հասնում:

• Թասերի հարդարանքին բնորոշ են հորիզոնական նեղ գոտիները ներսից, իսկ շեղ գծիկները՝ շուրթի վրա, կամ էլ դրսից:

Ինչպես երևում է յուրաքանչյուր զարդամոտիվի քննության ժամանակ բերված աղերսներից, Տիգրանակերտի անտիկ խեցեղենի՝ այդքան բնորոշ երկրաչափական բնույթի զարդամոտիվները առատորեն հանդիպում են ինչպես Հայաստանի համաժամանակյա հուշարձանների (Արտաշատ, Արմավիր, Գառնի, Դվին, Երվանդաշատ, Շամիրամ, Ավան, Բենիամին, Շիրակավան, Հողմիկ և այլն) նյութերում, ներկայիս Ադրբեջանի (Մինգեչաուր, Աղջաբեդի, Միլի տափաստան), այնպես Վրաստանի (Ուպլիսցիխե, Սամադլո), Իրանի, Հյուսիսմերձսևծովյան բնակավայրերի, Սիրիայի և Փոքր Ասիայի հելլենիստական և ավելի վաղ շերտերի նյութերում: Սակայն ամենամոտ զուգահեռները գտնում ենք Տիգրանակերտի հարևան տարածքներում՝ Մարտակերտում, Հաթերքում, Ճանկաթաղում պատահականորեն հայտնաբերված, դամբարանային նյութ հանդիսացող ամբողջական անոթների զարդաձևերի մեջ:

3.2. Փորագրազարդում

Խեցեղենի հարդարման այս տեխնիկան թեև ամենաավանդականն է և ունի խորը արմատներ, սակայն Տիգրանակերտի անտիկ խեցեղենի մեջ քիչ է հանդիպում: Ըստ էության, փորագրազարդման տեխնիկան գունազարդման նման հորինվածքային և զարդամոտիվային լայն հնարավորություններ է տալիս: Փորագրազարդ բեկորները հիմնականում կրում են երկրաչափական մոտիվներ, սակայն հանդիպում են նաև մարդու և կենդանիների պատկերներ: Ըստ այդմ՝ փորագիր զարդերը մեր կողմից բաժանվել են հետևյալ տեսակների՝

1. անոթը գոտևորող հորիզոնական գծեր,
2. համաչափ կրկնվող ուղղահայաց գծեր,
3. զուգահեռ գոտիների մեջ շեղ դասավորված գծիկներ,
4. կետային հարդարանք,
5. «եղունգազարդ»,
6. այլ (անորոշ կամ վարպետի նշաններ),
7. ֆիգուրատիվ պատկերներ և տեսարաններ:

Փորագիր զարդերը հանդիպում են ինչպես բաց օխրայագույն, կարմրավարդագույն, այնպես էլ սև և մոխրագույն մակերես ունեցող անոթների վրա: Երբեմն համատեղված են լինում գունազարդման և ծեփման ու վերադրման եղանակների հետ:

Արցախի Տիգրանակերտից ցայսօր հայտնի փորագրազարդ նմուշների մեջ առանձնանում է Անտիկ առաջին թաղամասում 2012 թ. հայտնաբերված հեծյալի պատկերով խեցատը: Այն դեղնադարչնագույն, փայլեցված մակերեսով փակ անոթի իրանի բեկոր է: Պսակից իրանին անցնող հատվածը երիզվում է փորագիր խոշոր զիգզագաձև զարդագոտիով, որից ներքև, եղունգազարդ մոտիվներից կազմված երկշարք զիգզագներ և եռանկյունիներ են փորագրված: Ուշադրության է արժանի բեկորի ձախ հատվածում տեղակայված, ուրվագծային կատարում ունեցող հեծյալի պատկերը: Ձին տրված է առջևի ոտքերն առաջ ձգված՝

վարգի ընթացքում: Հետևի ոտքերն ու պոչը չեն պահպանվել: Ականջները ցցուն են, գլուխը եռանկյունաձև տեսք ունի: Հեծյալը ձախ ձեռքով բռնել է ձիու սանձը, իսկ վեր բարձրացրած աջ ձեռքով՝ մահակը կամ նիզակը (վերջավորությունը չի պահպանվել), որը կարծես պատրաստվում է նետել: Ամենայն հավանականությամբ այստեղ որսի տեսարան է պատկերված: Դա է մատնանշում նաև Անտիկ թաղամասում հայտնաբերված նմանօրինակ մեկ այլ խեցատ, որի վրա եղունգազարդ զարդերիզի մեջ զետեղված է ստատիկ կանգնած եղջերու: Պահպանվել է կենդանու միայն առաջնամասը. ուրվագծային եղանակով կատարված եղջյուրներով զարդարված գլուխը և առջևի ոտքերը: Թեև այս երկու բեկորները չեն միանում, սակայն կավի բացարձակ նույն բաղադրությունն ու խեցու ֆակտուրան, մակերևույթի եղունգազարդ զարդամոտիվը և պատկերների ուրվագծային փորագրության նույնական ոճը թույլ են տալիս պնդել, որ դրանք միևնույն անոթի մաս կազմող բեկորներ են: Անոթի վրա ներկայացված որսորդության տեսարանը կարող է ունենալ ծիսական նշանակություն, քանի որ պաշտամունքային անոթների վրա էին արվում կենդանիներ պատկերող հորինվածքային տեսարաններ:

Փորագրազարդմամբ էին հարդարվում նաև խեցանոթների բռնակներն ու նստուկները:

3.3. Դրոշմազարդում

Տիգրանակերտի անտիկ խեցեգործության մեջ թեև փոքրաքանակ, բայց յուրահատուկ խումբ են կազմում դրոշմազարդման եղանակով հարդարված անոթները:

Դրոշմազարդ խեցեղենի բացառիկ օրինակներ են Միջնաբերդի, Հյուսիսային պարսպապատի և Անտիկ առաջին թաղամասի պեղումներով տարբեր տարիներին հայտնաբերված, ներքուստ ողկուզակիր գոտիներով հարդարված սևափայլ գավաթների, փիալայի և թասի բեկորները: Այս անոթներն անվանում ենք ողկուզակիր՝ նկատի ունենալով, որ կոնաձև, սուր գագաթով դեպի ներքև ուղղված, կլոր գնդիկներով լցված դրոշմազարդ պատկերներն ամենայն հավանականությամբ խաղողի ողկույզ են ներկայացնում:

Տիգրանակերտում հայտնաբերված երեսունից ավելի ողկուզակիր օրինակների քննությունը պարզում է, որ անտիկ վարպետները դրոշմազարդումն իրականացրել են կոնաձև, երեքից տասնմեկ հատիկներից կազմված ողկույզներ պատկերող առնվազն ինը դրոշմիչով: Ընդ որում՝ որոշ դեպքերում միևնույն քանակի հատիկներից բաղկացած ողկույզները հատիկների տարբեր դասավորվածություն ունեն (օրինակ՝ վեց կամ ութ հատիկների դեպքում):

Այս անոթները ներքուստ՝ շուրթեզրից 1,5-2,0 սմ ցած ունեն իրարից 1,5 սմ հեռավորությամբ ձգվող փորագիր հորիզոնական գոտիներ, որոնց արանքում, անոթի ողջ շրջագծով դրոշմված են ողկույզների ռիթմիկ կրկնվող պատկերներ: Միևնույն անոթի ներսում երբեմն առկա են միաժամանակ երկու ողկուզակիր գոտիներ: Ընդ որում՝ դրոշմազարդ առաջին գոտին երբեմն դրվում էր շրթեզրին

շատ մոտ, ինչպես ըմպանակներից մեկի դեպքում է: Ողկուզակիր երկրորդ գոտին զետեղվում էր անոթի ստորին մասում՝ ընդգծելով հատակը: Որոշ նմուշների դեպքում շուրթի երիզն էլ է ընդգծված փորագիր շատ նուրբ գոտիով: Հայտնաբերված խեցանմուշների վրա ողկույզները փորագիր հորիզոնական գոտիների մեջ հիմնականում մեկ շարքով են դրոշմված, սակայն հանդիպում են օրինակներ, որոնց շուրթից ներքև գոտին հարդարված է ողկույզների՝ շախմատաձև դասավորված երկու շարքով:

Պատկերագրության բազմազանությամբ աչքի ընկնող տարատեսակ դրոշմներով հարդարված խեցեղենը լայն տարածում է ունեցել դեռևս ուրարտական ժամանակաշրջանում: Սակայն Հայաստանի անտիկ հուշարձաններից դրոշմազարդ խեցեղենի մի քանի նմուշ է դեռևս հայտնի (Արտաշատ, Ավան, Երվանդաշատ): Այս համատեքստում էլ ավելի են կարևորվում Տիգրանակերտի դրոշմազարդ խեցեղենի օրինակները, որոնք կարող են լույս սփռել Տիգրանակերտի մշակութային նորամուծությունների, առևտրամշակութային կապերի և բուն Տիգրանակերտի տարածաշրջանում նրա խաղացած մշակութային դերակատարման վրա:

3.4. Ծեփում և վերադրում

Անոթների հարդարման ամենաբարդ միջոցն են, որոնք ենթադրում են տարբեր տեխնիկաների համաժամանակյա օգտագործում: Գեղարվեստական հարդարանքի այս եղանակով գլխավորապես ձևավորվում էին անոթների իրանները, ծորակները և բռնակները: Այն գերադասելի էր նախ և առաջ փակ անոթների՝ կարասների հարդարանքի համար: Վերադիր պարանահյուս կամ իրար հաջորդող ուռուցիկ «մատնեքավոր» զարդամոտիվներով ձևավորված գոտիները հիմնականում զետեղվում էին կարասների ուսերի և պսակների միացման, ինչպես նաև իրանի ամենալայն հատվածներում:

Ծեփման և վերադրման տեխնիկան նախընտրելի էր նաև կենդանակերպ անոթների, ինչպես նաև խեցանոթների ծորակների և բռնակների գեղարվեստական հարդարանքի մեջ: Նմանօրինակ ձևավորումը միտված էր շեշտելու անոթի ծիսական բնույթը և հիմնականում ուներ պահպանական նշանակություն: Այս շարքում հատկապես առանձնանում են Տիգրանակերտի պեղումներով տարբեր տարիներին հայտնաբերված ծիսական անոթի ցլի գլխիկ պատկերող առաջամասը և ծորակավոր անոթների կենդանակերպ (խոյի, այծի պատկերներով), ինչպես ռեալիստական, այնպես էլ ոճավորված ձևավորում ունեցող ծորակները:

3.5. Փայլեցում

Անոթի մակերեսը մշակելու տեխնիկական միջոց լինելուց զատ (երբ արտաքինն ավելի հարթ և ողորկ դարձնելու համար շփոթապատելուց հետո և թրծումից առաջ անոթն ամբողջությամբ կոկվում և փայլեցվում էր)՝ փայլեցումն ուներ նաև դեկորատիվ նշանակություն: Ինտենսիվ, համաչափ և ուղղորդված փայլեցման միջոցով կարելի էր ստանալ տարբեր զարդամոտիվներ: Տիգրանակերտի

անտիկ շերտերից հայտնաբերված, այս եղանակով հարդարված օրինակներն առավելապես մոխրագույն խեցեղենի, հազվադեպ նաև բաց վարդագույն, անփայլ մակերես ունեցող բեկորներ են: Դրանց հիմնական զարդամոտիվը ուղղահայաց, ալեձև կամ հորիզոնական գծերն են՝ իրականացված տարբեր ինտենսիվությամբ և խտությամբ, որոնք երբեմն անոթը ծածկում են ամբողջությամբ:

Հետաքրքիր լուծումներ է ստանում նաև անոթների նստուկների՝ փայլեցման միջոցով իրականացված հարդարանքը: Հյուսիսային պարսպի պեղումներով հայտնաբերված մոխրագույն բաց անոթի նստուկին նշված եղանակով սիմվոլիկ շախմատաձև զարդ է ստացվել:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք ասել, որ Տիգրանակերտի անտիկ ժամանակաշրջանի խեցեղենը Հայաստանի ուշ հելլենիստական խեցեգործության հարդարման զարդաձևերի և դրանց իրականացման հնարների անքակտելի մասն է, բայց ունի իր առանձնահատկությունները: Այն աչքի է ընկնում իր զարդամոտիվների բազմազանությամբ՝ ներկայացնելով անտիկ դարաշրջանում խեցեղենի գունազարդման գործընթացի ամենավերջին և ամենաճաղկուն փուլը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արցախի Տիգրանակերտի անտիկ ժամանակաշրջանի (մ.թ.ա. 1-ին – մ.թ. 3-րդ դարեր) խեցեղենը աղբյուրագիտական մեծ արժեք է ներկայացնում վերոհիշյալ ժամանակաշրջանի նյութական և հոգևոր մշակույթի ուսումնասիրության համար:

Այս խեցեղենի ձևակազմական, տիպաբանական և գեղարվեստական հարդարման քննությունը ցույց է տալիս, որ անոթները ստեղծվել են ձևի, կիրառական նշանակության, զարդապատկերի և գունային երփներանգի միասնական ամբողջականության մեջ:

2. Տիգրանակերտի խեցեղենի հիմնական մասը պատրաստված է ավազախառն մանրահատ կավի՝ լավ հունցած, բարձրորակ խմորից: Թրծումը սպասքի անոթների դեպքում բարձրորակ է, իսկ տնտեսական ու խոհանոցային տեսականու դեպքում երբեմն թուխ միջնաշերտով: Անոթները պատրաստված են դուրգի վրա, թեև կան ձեռածեփ օրինակներ ևս: Հաճախ դրանց մակերեսը ծածկված է դեղնաշագանակագույն, կարմրաշագանակագույն, բաց վարդագույն շփոթով, իսկ երբեմն էլ անգոբով և փայլեցրած է:

Անտիկ խեցեղենի քառասուն հազարի հասնող բեկորների վիզուալ քննությամբ առանձնացվել է երեք տեխնիկական խումբ՝ կարմրավարդագույն (75 %), դեղնականաչավուն (16 %), սև ու մոխրագույն (9 %)՝ իբրև տարբերակիչ հատկանիշներ ընտրելով նախ և առաջ խեցու գույնը, կտրվածքի բնութագիրը, ինչպես նաև մակերեսի մշակման ձևը:

Թեև Տիգրանակերտում դեռևս չեն հայտնաբերվել խեցեգործական արհեստանոցներ և թրծման վառարաններ (որոնք ամենայն համոզմամբ կբացվեն քաղաքային թաղամասերը մեծ ծավալներով պեղելու արդյունքում), սակայն խեցե-

ղեն նյութի առատությունն ու զանգվածային բնույթը, պատրաստման որակական հատկանիշները վկայում են այն մասին, որ այն արտադրվել է արագ պտտվող դուրգի վրա՝ իբրև քաղաքային արհեստավորական արտադրանք և իբրև շուկայական արժեք հանվել վաճառքի:

3. Տիգրանակերտի պեղումներով հայտնաբերված մեծածավալ անտիկ խեցեղենն ունի ձևերի բազմազանություն, որի դասակարգումը խիստ առաջնային էր: Առաջադրվել, մեթոդաբանորեն հիմնավորվել և կիրարկվել է անտիկ խեցեղենի դասակարգման գործառութային-ձևաբանական մոդելը: Նման քննության շնորհիվ ըստ գործառութային նշանակության առանձնացվել են յոթ հիմնական կատեգորիաներ, որոնք իրենց հերթին՝ ըստ ձևաբանական հատկանիշների, ստորաբաժանվել են տեսակների, տիպերի և տարբերակների:

Նյութի համալիր հետազոտության արդյունքում դուրս են բերվել խեցեղենի մի քանի տեղային տիպեր, ինչպիսիք են ծորակավոր և հորիզոնական մեկ կանթով սափորները, կաթսայատիպ ու սևափայլ ողկուզակիր անոթները:

4. Տիգրանակերտի անտիկ խեցեղենը, ձևերի բազմազանությունից զատ, աչքի է ընկնում հարդարման հնարների, զարդամոտիվների, հորինվածքների հարստությամբ: Այն ներկայանում է ինչպես անզարդ, այնպես էլ շքեղ գունազարդ, սև և մոխրագույն, փայլեցված, դրոշմազարդ և փորագիր զարդերով հարդարված տեսակներով, որոնց մեջ զգալի մաս է կազմում բաց հիմնագույնի վրա օխրայի տարբեր երանգներով արված գունազարդ խեցեղենը: Նյութի քննությունը ցույց է տվել, որ զարդամոտիվի տեղադրումն անոթի մակերեսին թելադրված է անոթի ձևից: Ընդ որում՝ փակ անոթների զարդանախշը զետեղված է պսակի և իրանի ամենալայն հատվածների վրա, բաց անոթների դեպքում նկարազարդված է դրանց՝ թե՛ արտաքին, թե՛ ներքին մակերեսը: Երբեմն փոխառելով անոթների ձևակազմությունը՝ տիգրանակերտյան վարպետներն ուրույն մոտեցում են ցուցաբերել դրանց գունազարդման մեջ՝ հավատարիմ մնալով անոթների հարդարման՝ արդեն մշակված, տեղական, տիգրանակերտյան ոճին:

5. Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցանոթների աղերսների լայն ընդգրկմամբ քննարկումը ցույց է տալիս, որ այն Հայաստանի ուշ հելլենիստական ժամանակաշրջանի խեցեղենի օրգանական մասն է կազմում: Իր մեջ կուտակելով Հայկական լեռնաշխարհի և հարևան երկրներում ստեղծված այդ բնագավառի հմտությունները, մյուս կողմից էլ ստեղծելով նաև իր սեփական, միայն Տիգրանակերտին բնորոշ ձևեր և հատկապես զարդաձևերի իրեն բնորոշ համադրություններ՝ տարածել է ողջ Արցախում և Ուտիքում: Այդ նույն հատկանիշներով այն կապվում է նաև հարևան երկրների՝ Իրանի, Սիրիայի, Հունաստանի, Փոքր Ասիայի համաժամանակյա խեցեղենի հետ: Ասվածն իրավացի է հատկապես գունազարդ տեսականու պարագայում, որը պատկանում է ուշ հելլենիստական բազմաոճ խեցեղենի վերջին փուլին, երբ այն հասել էր իր ծաղկման գագաթնակետին (մ.թ.ա 1-ին - մ.թ 1-ին դդ.): Տիգրանակերտի անտիկ խեցեղենի ամենամոտ զուգահեռները գտնում ենք Կուրի աջափնյակում տեղակայված և քաղաքից մոտ 40-45 կմ դեպի արևելք գտնվող Գալա-Թեփե և Գարաքոբար

բնակավայրերի և դամբարանադաշտերի նյութերում, որոնք նույնական են տիգրանակերտյան նյութին, կրկնում են դրանց ձևերը, հարդարման և գունազարդման հնարները: Կարծում ենք, որ դրանք կարող էին լինել Տիգրանակերտի արտադրանքը:

Արցախի Տիգրանակերտի գունազարդ խեցեղենի որոշ օրինակների վրա զգացվում է այսպես կոչված ֆեսթունյան (Festoon), թրիանգլ (Triangle) և արդաբիլյան (Ardabil) ոճերի արձագանքը, ինչպիսիք են թեք գծերով ներգծված և ցանցաձև եռանկյունիներով ձևավորված ըմպանակներն ու թասերը, հոծ ներկած եռանկյունիներով և շեղանկյուններով հարդարված սափորները:

Տիգրանակերտի և հարակից հուշարձանների հատկապես գունազարդ խեցեղենի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս փաստել, որ Կուրից հյուսիս և հարավ համաժամանակյա խեցեղենի ձևաբանական-տիպաբանական նմանությունների սահմաններում Կուրից հյուսիս հարդարումն իրականացվել է առավելապես փորագրման, ծեփման և վերադրման եղանակով, այն դեպքում, երբ Կուրից հարավ ակնհայտ է գունազարդման կիրառումը: Սա մեզ թույլ է տալիս արդեն գոյություն ունեցող մոտեցումներին ավելացնել ևս մեկը, որն անմիջականորեն առնչվում է քաղաքային կենցաղ վարող բնակչության աշխարհընկալմանն ու ճաշակին: Սա Կուր գետը անտիկ շրջանում էթնիկական սահման ծառայելու մասին հայեցակարգի մի նոր փաստարկ է:

6. Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեղենը և կավակերտ առարկաները լույս են սփռում քաղաքի բնակիչների կենցաղի, զբաղվածության և տնտեսական գործունեության վրա: Դրանք լրացուցիչ փաստարկներ ընձեռեցին հաստատելու, որ այստեղ ապրել են քաղաքային կենցաղ վարող բնակիչներ, ովքեր զբաղվել են երկրագործական, անասնապահական մթերքների մշակմամբ և արհեստագործությամբ, ունեցել են աշխույժ առևտրական և մշակութային հարաբերություններ թե՛ Հայաստանի և հարևան երկրների անտիկ քաղաքների, թե՛ իրանական կենտրոնների հետ:

Հարուստ հնագիտական նյութի ուսումնասիրությունը թույլ է տալիս վերականգնել քաղաքային կենցաղի որոշ դրվագներ: Օրինակ՝

- Զանազան տիպի բլիթներն ու հացը թխվել են սաջերի վրա, կերակուրը պատրաստվել է ավանդական կճուճներում և մատուցվել է գունազարդ կճուճներով և կաթսայատիպ անոթներով: Խմիչքները մատուցվել են միականթ, երկկանթ, ծորակավոր և երեքնուկաձև շուրթով սափորներով, խմել են շուրթի տարատեսակ լուծումներով և տարաչափ թասերով, փիալա-ըմպանակներով, գավաթներով: Ծիսական խմիչքը հեղվել է կենդանակերպ անոթներով: Հացը, պանիրը և պինդ կերակուրը սեղանին են դրվել սաղր պնակներով, միրգը՝ շքեղ զարդարված սկուտեղներով: Դատելով Տիգրանակերտի անտիկ խեցեղեն հավաքածուի մեջ առկա հատակամասում փոսորակ–խորություն ունեցող, բարձր օղակաձև նստուկով փռված անոթների առատությունից՝ կենցաղ էին մտել ձկան օգտագործման հատուկ անոթներ՝ ձկնաման-իխտիաները, որոնք հելլենիստա-

կան աշխարհի և կենցաղի հետ ունեցած կապի արդյունք էին: Իսկ քաղաքի շրջակայքով հոսող Խաչենագետը հարուստ էր ձկներով:

- Տիգրանակերտից հայտնաբերված բազմաքանակ, մեծ չափերի կարասները ծառայել են գինու և սորուն մթերքների պահպանմանը: Հուշարձանի պեղվող բոլոր հատվածներից հայտնաբերված, հեղուկի տեղափոխմանը ծառայող տափաշշերի մեծ քանակը քաղաքից գինի և այլ հեղուկներ արտահանելու (ներկրելու) վկայություն կարող է լինել:
- Կաթնամթերքի վերամշակման համար նախատեսված ձձումների բազմաթիվ բեկորները, մեծ տաշտ-կոնքերը, լայնաբերան, երկկանթ կճուճների գյուտերն անտիկ բնակարաններից, կաթնամանները, սափորները, խոյակերպ տարրեր կրող անոթներն ուղղակի և անուղղակի կերպով առնչվում են անասնապահական տնտեսությանը: Այս տվյալները համընկնում են Հայաստանի մյուս քաղաքներից ու բնակավայրերից հայտնի նյութերի հետ, որոնց հիման վրա դեռ Հերոդոտոսն է հայերին անվանել «անասուններով հարուստ» (Հերոդոտոս, V/49), իսկ ականատես Քսենոփոնը թվարկում է այդ կենդանիների տեսակները անվանապես (Քսենոփոն, IV, V, 25):
- Խեցեգործական արտադրության մի շարք տեսակները՝ հում կավից պատրաստված բլիթաձև, կոնաձև հատած բրգաձև կախիկ-ծանրոցները, թեշիկ–իլիկի կավե գլխիկները, որոնք մեծ քանակությամբ հայտնաբերվել են թե՛ միջնաբերդի, թե՛ Անտիկ առաջին քաղաքային թաղամասի պեղումներով, լրացնում են քաղաքի բնակիչների տնտեսական գործունեության՝ ջուլհակության և գորգագործության վերաբերյալ կուտակված տվյալները:
- Մեծաքանակ կավե կոճակները, զգեստը կրծքամասում կամ ուսամասում ամրացնող զարդաքորոցների կավե և քարե գլխիկ-ճարմանդները, պատկերացում են տալիս նշված ժամանակաշրջանի հագուստի և զգեստավորման վերբերյալ:
- Զանգվածեղ, երկկոնաձև խնկարկման անոթի բեկորը լույս է սփռում պաշտամունքային արարողությունների վրա: Առանձնապես հուսադրող է խեցե փողրակի բեկորի գյուտը, որը կարող է կապված լինել քաղաքի ջրամատակարարման հարցերի հետ, եթե հայտնագործությունները շատանան:
- Տիգրանակերտի ներմուծված խեցեղենի նմուշները փաստում են բնակավայրի՝ հայրենի ու հարևան երկրների քաղաքների հետ ունեցած տնտեսական ու մշակութային կապերի մասին: Այդ նյութերի՝ թեև համեստ, բայց հատկանշական նմուշների առկայությունը վկայում է քաղաքի բնակչության՝ ուշ հելլենիստական մշակույթի բոլոր կողմերին լավատեղյակ և հաղորդակից լինելու մասին: Ներմուծված նյութերի սակավությունը, բեկորային վիճակը առայժմ թույլ չեն տալիս հստակորեն խոսել դրանց արտադրող, ներմուծող և երկրում տարածող կենտրոնների մասին: Արցախի Տիգրանակերտի ներմուծված խեցեղենն ամենայն հավանականությամբ ծագում է Հայաստանի ավանդական գործընկերներ Միջագետքի, Փոքր Ասիայի, Հյուսիսմերձսևծովյան արտադրական կենտրոններից: Դրանց հետ առևտրի ծավալը, մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբից

ակտիվանալով, մ. թ. ա 1-ին – մ. թ. 1-ին դարերում ընդլայնվել և հասել էր իր ծաղկման գագաթնակետին: Դա պայմանավորված էր Տիգրան Մեծի ստեղծած լայնածավալ պետության պայմաններում հաղորդակցման ուղիների վրա հաստատուն հսկողություն սահմանելով և արևելքում առևտրաքաղաքական միջնորդ դառնալով: Տիգրանակերտի մշակութային նորամուծությունների, առևտրամշակութային կապերի և բուն Տիգրանակերտի՝ տարածաշրջանում խաղացած մշակութային դերակատարման մասին են խոսում հուշարձանից հայտնաբերված դրոշմազարդ խեցեղենի օրինակները:

Անտիկ խեցեղենի տեխնոլոգիական, ձևաբանական և գեղարվեստական հարդարանքի բազմազանությունը, դրա առանձնահատուկ կերպարը, որը հենց բնութագրական է Կուր գետի աջափնյակի համար, հնարավորություն է տալիս խոսելու Տիգրանակերտի մշակութային ֆենոմենի մասին: Այն ևս մեկ անգամ հաստատում է, որ քաղաքն անտիկ շրջանում Արցախ-Ուտիքում եղել է առևտրաարհեստավորական և մշակութային խոշոր կենտրոն և մշակութային արժեքների փոխանցողը դեպի հյուսիս և արևելք:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Արցախի Տիգրանակերտի 2012 թ. հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները, Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2011-2012 թթ., «Դիզակ պլյուս» հրատ., Ստեփանակերտ, 2015, էջ 73-108 (համահեղինակներ՝ Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ, Սաֆարյան Վ., Կարապետյան Ի., Վարդանեսովա Տ., Հովսեփյան Ռ.):
2. Արցախի Տիգրանակերտի ներմուծված խեցեղենը, Արցախի անկախության հռչակման 25-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, ԱրՊՀ հրատ., Ստեփանակերտ, Պրակ I, 2016, էջ 46-51 (համահեղինակ՝ Կարապետյան Ի.):
3. Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեղենի հարդարանքի դասակարգման փորձ, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2017, էջ 372-383:
4. Արցախի Տիգրանակերտում հայտնաբերված անտիկ խեցեղենի մի խմբի մասին, «Հայաստանը և արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը. Բ» Միջազգային գիտաժողով, ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտ, Երեւան, 7-8 դեկտեմբերի 2017 թ. Զեկուցումներ և զեկուցումների դրույթներ, էջ 53-58:
5. Stamped pottery from Tigranakert in Artsakh, Aramazd, vol. XII Issue 2 2018, Association for Near Eastern and Caucasian Studies, Yerevan, Oxford, 2018, pp. 172-181.
6. Արցախի Տիգրանակերտի կաթսայատիպ անոթները, «ՎԷՄ» համահայկական հանդես, 2019, թիվ 1 (65), էջ 128-138:

ГАБРИЕЛЯН АРМИНЕ АРАРАТОВНА

АНТИЧНАЯ КЕРАМИКА АРЦАХСКОГО ТИГРАНАКЕРТА

(ТЕХНИКО-ТЕХНОЛОГИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА, ФУНКЦИОНАЛЬНО-МОРФОЛОГИЧЕСКАЯ КЛАССИФИКАЦИЯ, ХУДОЖЕСТВЕННОЕ ОФОРМЛЕНИЕ)

Резюме

Восстановление исторического этно-культурного облика двух крупных северо-восточных провинций исторической Армении - Арцаха и Утика является одной из важнейших проблем современного арменоведения. Эта проблема с учетом современных геополитических процессов приобрела помимо культурного, также и политическое значение. В этой связи историко-археологическое исследование Арцахского Тигранакерта приобретает первостепенное значение. Раскопки Тигранакерта выявили новые археологические комплексы позднеэллинистического и позднеантичного периодов (1 в. до н. э. – 3 в. н. э.), в ряду которых особое место занимает керамика - самый многочисленный материал среди археологических находок за почти полтора десятилетия раскопок.

В диссертации впервые: а) представлена и введена в научный оборот керамика позднеэллинистического и позднеантичного периодов Арцахского Тигранакерта и его окрестностей; б) на основе технико-технологического, типологического и художественного анализа восстановлена ее общая характеристика (подбор сырья, предварительная подготовка и очистка, формовка, орнаментирование, обжиг, структурно-семантическая классификация); в) определена ее роль в культурном контексте города, его окрестностей и Правобережья Куры; г) на основе вышеуказанных результатов исследованы и намечены некоторые аспекты экономической и культурной жизни города и провинции, отдельные черты быта, верований и ритуалов.

В первой главе диссертации рассмотрен процесс производства керамики в целом. Представлена общая картина гончарного дела в Тигранакерте. Богатый археологический материал раскопок дополнен соответствующими этнографическими данными и материалами, собранными автором, относящимися к традиционным навыкам современных мастеров-гончаров.

По результатам исследования можно заключить, что большая часть тигранакертской керамики изготовлена из хорошо замешанной высококачественной мелкозернистой глины с примесью песка. Обжиг столовой посуды производился на высоком уровне, в то время как обжиг хозяйственной и кухонной посуды – менее качественно. Сосуды изготовлены на гончарном круге, но встречаются также и образцы ручной работы. Часто их поверхность покрыта желтовато-бурой, красно-коричневой или бледно-розовой обмазкой, в отдельных случаях - ангобом и отполирована.

Визуальное изучение почти сорока тысяч фрагментов керамики позволил выделить три технические группы: розово-красная (75%), желто-зеленая (16 %), серо-чер-

ная (9 %). При характеристике, в первую очередь, учитывался цвет, особенности обломка в разрезе, а также способ обработки поверхности.

Керамика Тигранакерта отличается разнообразием форм. Ее классификация стала одной из основных задач исследования. Во второй главе диссертации для комплекса античной керамики предложена, методологически обоснована и применена четко разработанная модель ее классификации. Благодаря такому подходу по признаку функционального назначения были выделены семь основных категорий, которые, в свою очередь, в соответствии с морфологическими особенностями подразделены на виды, типы и варианты.

Третья глава диссертации посвящена анализу технических методов художественного оформления и семантике орнаментаций. Античная керамика Тигранакерта, помимо разнообразия форм, отличается также богатством способов оформления, орнаментальных мотивов и композиций. Наряду с неорнаментированными экземплярами, выделены образцы с расписной, полированной, гравированной и штампованной орнаментикой. По численности и разнообразию орнаментальных мотивов выделяется расписная керамика, в особенности, экземпляры с различными оттенками красного на бледно-коричневом фоне. Способом подробной класссификации выделены геометрические, растительные и фигуративно-сюжетные композиции.

Комплексное исследование античной керамики Тигранакерта показывает, что она является неотъемлемой частью керамики позднего эллинистического периода Армении. Используя древние традиционные навыки ремесла и развивая новые, особенно в области художественного оформления, керамическое мастерство тигранакертских гончаров распространилось по всей территории Арцаха и Утика.

В результате сравнительного анализа выявлены также общие черты и признаки тигранакертской керамики с гончарным производством соседних стран: Ирана, Сирии, Греции, Малой Азии. Это особенно касается расписной керамики, которая достигла пика расцвета в 1-ом в. до н.э. по 1 вв н. э.

Античная керамика Тигранакерта проливает свет на быт, род занятий и хозяйственную деятельность городского населения. Функциональный и художественный анализ позволили заключить, что горожане, занимающиеся сельским хозяйством, животноводством и ремеслами, поддерживали торговые, культурные связи как с античными городами Армении и соседних стран, так и с городами Ирана и его керамическими центрами.

Диссертация изложена на 185 страницах, включает введение, три главы, с соответствующими подзаголовками, заключение, список источников и литературы, список сокращений, список карт и таблиц (4 карты и 64 таблицы).

ARMINE ARARAT GABRIELYAN

ANTIQUE CERAMICS OF TIGRANAKERT IN ARTSAKH
(TECHNICAL AND TECHNOLOGICAL CHARACTERISTICS, FUNCTIONAL AND MORPHOLOGICAL CLASSIFICATION, DECORATION)

Summary

The restoration of the historical ethno-cultural image of the two major North-Eastern provinces of historical Armenia-Artsakh and Utik, is one of the most important problems of modern Armenian studies, which, taking into account modern geopolitical processes, has acquired not only cultural but also political significance. In this regard, the historical and archaeological study of Tigranakert in Artsakhis of paramount importance. The excavations of Tigranakert revealed new archaeological complexes of the late Hellenistic and late antique periods (1st century BC – 3rd century AD), among which a special place is occupied by ceramics - the most numerous among the archaeological finds for almost a decade and a half of excavations.

The thesis first a) introduces and puts into scientific circulation ceramics of late-Hellenistic and late antique periods of Tigranakert of Artsakh and its surroundings; b) on the basis of technological, typological and artistic analysis its general characteristics is restored (selection of raw materials, preliminary preparation and refining, forming, ornamentation, baking, structural-semantic classification); c) defines its role in the cultural context of the city, its surroundings and the right Bank of the Kura river; d) on the basis of the above results, some aspects of the economic and cultural life of the city and province, individual manifestations of everyday life, beliefs and rituals are studied and outlined.

In the first Chapter of the thesis, the process of producing ceramics is consideredin general terms. An approximate picture of ceramics in Tigranakert is presented: the rich archaeological material of the excavations is supplemented by corresponding ethnographic data and materials collected by the author relating to the traditional skills of modern master potters. According to the results of the study, we can conclude that most of Tigranakert ceramics are made of well-mixed high-quality fine-grained clay with a mixture of sand. The baking of tableware is perfectly performed, in case of household and kitchen utensils – with grey streaks in the middle. The vessels are made on a potter's wheel, but there are also hand-made samples. Often their surfaces are covered with yellowish-brown, red-brown or pale pink coating, sometimes they are covered with slip and are polished.

Visual analysis of almost forty thousand fragments of pottery (or shards) allowed us to identify three technical groups: pink-red (75%), yellow-green (16%), grey-black (9%). By description, first of all, the colour, visual features of the fragment, as well as the method of surface treatment were taken into account.

Tigranakert ceramics differ in many forms, and its classification is one of the main objectives of the study. In the second Chapter of the thesis, a functional-morphological hierarchical model of classification of antique ceramics is proposed, methodologically justified and applied. Thanks to this approach 7 categories were identified, which, in turn, are divided into species, types and samples according to morphological characteristics.

The third Chapter of the thesis is devoted to the analysis of technical methods of decoration and the semantics of ornaments. In addition to the variety of forms, the antique ceramics of Tigranakert also differ in the richness of design methods, ornamental motifs and compositions. Along with the unornamented ones, the samples with polished, engraved and stamped ornamentation are highlighted. In terms of the number and variety of ornamental motifs, painted ceramics stand out, especially specimens with different shades of red on a pale brown background. Geometric, plant, and figurative-plot compositions are distinguished by the method of detailed classification.

A complex study of the ancient ceramics of Tigranakert shows that it is an organic part of the ceramics of the late Hellenistic period of Armenia. Using traditional skills known in this craft and developing their own approaches, especially in the field of artistic design, the ceramic skills of Tigranakert potters spread throughout Artsakh and Utik. At the same time, the comparative analysis revealed common features of Tigranakert ceramics with the pottery production of neighbouring countries: Iran, Syria, Greece, and Asia Minor. This is especially true of painted pottery, which reached its peak in the 1st century BC to the 1st century AD.

The antique ceramics of Tigranakert sheds light on the life, occupation and economic activity of the urban population. Functional and artistic analysis allowed us to conclude that the urban people engaged in agriculture, cattle farming, and crafts-maintained trade and cultural ties with both Armenian and neighbouring antique cities, as well as with Iranian centres.

The thesis presented on 185 pages, includes an introduction, three chapters with corresponding subheadings, conclusion, list of sources and literature, list of abbreviations, list of maps and tables (4 maps and 64 tables).